Կարգապահական գործ թիվ ԿԳ-23030

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Միքայել Դանիելյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Շուշանիկ Շահինյանի,

քննության առնելով փաստաբան Շուշանիկ Խաչատուրի Շահինյանին (այսուհետ նաև՝ **Փաստաբան կամ Պատասխանող**) (արտոնագիր՝ թիվ 2627), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Արտակ Ստեփանյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետ՝ նաև **Պալատ**), հայտնել է, որ իր գործի վերաբերյալ ստացված տեղեկությունների համաձայն քրեական վերաքննիչ դատարանը վաղուց կայացրել է որոշում:

Դիմողը նշել է, որ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակից տեղեկացել է այն մասին, որ իր գործը փոխանցվել է հանրային պաշտպան փաստաբան Շուշանիկ Շահինյանին, ով չի ներկայացրել բողոք ՀՀ վերաքննիչ դատարանի որոշման դեմ:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է քննարկել փաստաբան Շուշանիկ Շահինյանի վարքագիծը:

Միաժամանակ, ՀՀ փաստաբանների պալատը արձանագրում է, որ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 21.08.2023թ. գրության, Արտակ Ստեփանյանի դիմումի, փաստաբան Շուշանիկ Շահինյանի 14.08.2023թ. զեկուցագրերի համադրության արդյունքում պարզվել է, որ Արտակ Ստեփանյանի և Աբգար Ջումայանի վերաբերյալ գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 20.01.2023թ. կայացված որոշման դեմ Շուշանիկ Շահինյանը վճռաբեկ բողոք չի ներկայացրել:

Հարկ է նշել, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 20.01.2023թ. կայացված դատական ակտն ի վնաս Արտակ Ստեփանյանի և Աբգար Ջումայանի է:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.09.2023 թվականին Դիմողին, առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն վերջինս կողմից լրացուցիչ տեղեկատվություն չի ներկայացվել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Շուշանիկ Շահինյանին առաջարկվել է՝ Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Արտակ Ստեփանյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 14.08.2023թ. ներկայացված բացատրությամբ հայտնել է, որ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 11.07.2022թ.-ի թիվ ՀՊԳ-Գ/3666/22-Ա որոշման հիման վրա իրեն հանձնարարվել է իրականացնել Դիմողի շահերի պաշտպանությունը վերաքննիչ դատարանում (թիվ ԳԴ1/0015/01/20 քրեական գործ), որտեղ ինքը ներկայացել է դատական նիստերի, ներկայացրել է թե բանավոր, թե գրավոր առարկություններ տվյալ քրեական գործով դատախազի կողմից բերված վերաքննիչ բողոքի վերաբերյալ:

Փաստաբանը հայտնել է, որ ստացել է նաև վերաքննիչ դատարանի 20.01.2023թ. կայացված դատական ակտը, որի վճռաբեկության կարգով բողոքարկման համար նախատեսված էր մեկամսյա ժամկետ:

Փաստաբանի պնդմամբ, ողջ ամսվա ընթացքում ինքը եղել է գերծանրաբեռնված, ունեցել է նախապես պլանավորված և նշանակված մոտավորապես 60-ից ավել քննչական գործողություններ և դատական նիստեր, կազմել է ավելի քան 10-ից ավել բողոքներ, ինչպես նաև նախապատրաստվել է դատական նիստերին և պաշտպանական ճառերին:

Փաստաբանը հայտնել է, որ Արտակ Ստեփանյանի գործով վճռաբեկ բողոք ներկայացնելու ժամկետի մասով վրիպել է և բաց է թողել այն՝ հավելելով, որ գիտակցում է

բողոքարկման ժամկետի բաց թողնմամբ պայմանավորված քաղաքացին հնարավորություն չի ունեցել իրացնել իր վերաբերյալ կայացված դատական ակտը բողոքարկելու իր իրավունքը, չնայած վերաքննիչ դատարանի դատական ակտը մանրամասն ուսումնասիրելուց հետո Փաստաբանը ունեցել է համոզմունք, որ վճռաբեկ բողոք կազմելու դեպքում այն լինելու էր բավականին չպատճառաբանված և չհիմնավորված:

Փաստաբանը նշել է նաև, որ իրավիճակը շտկելու նպատակով ինքը կազմել է միջնորդություն՝ ազատազրկման ձևով պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ, որը բավարարվելու հավանականությունը ավելի մեծ էր:

Վերոգրյալի հաշվառմամբ խնդրել է հնարավորինս մեղմ վերաբերվել իր նկատմամբ, քանի որ ինքը դիտավորություն չի ունեցել:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 20.03.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 19.09.2023թ. բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացրած իր դիրքորոշումը՝ հավելելով, որ Դիմողի համար բացասական հետևանքները նվազեցնելու նպատակով ներկայացրել է միջնորդություն՝ ազատազրկման ձևով պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ, որն ընդունվել է վարույթ: Միաժամանակ, Փաստաբանը նշել է, որ սույն թվականի օգոստոսի 4-ին ներկայացրել է դիմում աշխատանքից ազատվելու վերաբերյալ:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>.

Պալատի նախագահի 23.08.2023թ. թիվ 216-Ա/ԿԳ-23030 որոշմամբ փաստաբան Շուշանիկ Շահինյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի **կանոնագրքի (այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 2.7.2, 3.5.5, և 2.9.2 ենթակետերի հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

30.08.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին:

Այնուհետև 17.10.2023թ. նշված գործի նախապատրաստումը վերամակագրվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Սույն կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 27.10.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել այն փաստերը, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 20.01.2023թ. որոշումը Պալատի հանրային պաշտպանի գրասենյակում ստացվել է 26.05.2023թ., սակայն այն սահմանված մեկամսյա ժամկետում չի բողոքարկվել, թիվ ԳԴ1/0015/01/20 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 20.01.2023թ. որոշումը Դիմողի կողմից բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան 15.08.2023թ., իսկ 12.09.2023թ. որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը բավարարել է Դիմողի միջնորդությունը՝ դատական ակտի բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին և մերժել բողոքի վարույթ ընդունումը, Փաստաբան Շուշանիկ Շահինյանը ընդունել է, որ բաց է թողել վճռաբեկ բողոք ներկայացնելու ժամկետները և ընդունել է մեղքը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 27.10.2023թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 23.11.2023թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Հանրային պաշտպան փաստաբան Շուշանիկ Շահինյանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը թիվ ԳԴ1/0015/01/20 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում ներկայացնելու նպատակով: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 11.07.2022թ. թիվ ՀՊԳ-Վ/3666/22-Ա որոշմամբ:*

2. Թիվ ԳԴ1/0015/01/20 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 20.01.2023թ. որոշմամբ՝ Դիմողը մեղավոր է ճանաչվել և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 1 տարի 6 ամիս (մեկ տարի վեց ամիս) ժամկետով, իսկ նշված որոշումը կարող էր բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝ ստանալու օրվանից մեկամսյա

ժամկետում: *Նշված փաստը հաստատվում է թիվ ԳԴ1/0015/01/20 քրեական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 20.01.2023թ. որոշումը Պալատի հանրային պաշտպանի գրասենյակում ստացվել է 26.05.2023թ., սակայն այն սահմանված մեկամսյա ժամկետում չի բողոքարկվել: *Նշված փաստերը հաստատվում են Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

4. Թիվ ԳԴ1/0015/01/20 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 20.01.2023թ. որոշումը Դիմողի կողմից բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան 15.08.2023թ., իսկ 12.09.2023թ. որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը բավարարել է Դիմողի միջնորդությունը՝ դատական ակտի բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին և մերժել բողոքի վարույթ ընդունումը: *Նշված փաստերը հաստատվում են թիվ ԳԴ1/0015/01/20 քրեական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

5. Փաստաբան Շուշանիկ Շահինյանը ընդունել է, որ բաց է թողել վճռաբեկ բողոք ներկայացնելու ժամկետները և ընդունել է մեղքը: *Նշված փաստը հաստատվում է 14.08.2023թ. և 19.09.2023թ. ներկայացված բացատրություններով, ինչպես նաև կարգապահական նիստի ընթացքում փաստաբանի արտահայտած դիրքորոշմամբ:*

6. Փաստաբան Շուշանիկ Շահինյանը իր 05.08.2023թ. դիմումի համաձայն՝ ազատվել է Պալատի հանրային պաշտպանի գրասենյակում հանրային պաշտպանի աշխատանքից: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Շուշանիկ Շահինյանը փաստաբան է հանդիսանում 24.05.2019 թ., և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Շուշանիկ Խաչատուրի Շահինյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, և 2.9.2 ենթակետերի խախտման համար հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 2.9.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կատարել (հարգել) Պալատի մարմինների և նախագահի՝ իրենց իրավասության սահմաններում ընդունած որոշումները, ինչը չի բացառում դրանց նկատմամբ քննադատական վերաբերմունք ունենալը ու օրենքով սահմանված դեպքերում և կարգով դրանց բողոքարկումը:*

Պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/9-Լ որոշմամբ հաստատված Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի 33-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ *Հանրային պաշտպանը պարտավոր է ի վնաս վստահորդի դատական ակտ (միջանկյալ և/կամ գործն ըստ էության լուծող) կայացված լինելու դեպքում՝ մինչև այդ ակտի բողոքարկման ժամկետի լրանալը վստահորդի հետ քննարկել դատական ակտը բողոքարկելու հարցը, եթե հանրային պաշտպանը մտադիր է չբողոքարկել այն: Դատական ակտի դեմ բողոք բերելուց հրաժարվելու դիրքորոշման հետ վստահորդի համաձայնության փաստը պետք է հաստատվի վստահորդի ստորագրած հանձնարարությամբ: Սույն ենթակետում նշված դեպքում հանրային պաշտպանը կազմում է նաև տեղեկանք՝ նշելով բողոք բերելուց հրաժարվելու շարժառիթները: Վստահորդի հանձնարարությունը չստանալու դեպքում՝ հանրային պաշտպանը պարտավոր է բողոքարկել դատական ակտը:*

Փաստաբանի՝ առավել ևս հանրային պաշտպանի, մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածով պայմանավորված Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են մի շարք պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պարտականությունը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Միաժամանակ, նկատի ունենալով խորհրդի՝ որպես Պալատի բարձրագույն մարմնի կարգավիճակը, ինչպես նաև հանրային պաշտպան հանդիսացող փաստաբանի գործունեության առանձնահատկությունը՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված պահանջի համատեքստում փաստաբանի համար կարող են սահմանվել նաև լրացուցիչ պարտավորություններ՝ Պալատի մարմինների, ինչպես նաև նախագահի՝ իրենց իրավասության սահմաններում ընդունված որոշումների կատարման մասով:

Հարկ է նշել, որ նշված նորմը բլանկետային է և հղում է կատարում Պալատի մարմինների կողմից ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես, սույն գործի շրջանակներում քննարկման ենթակա հարցին համապատասխան, Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի պահանջին առ այն, որ հանրային պաշտպան հանդիսացող փաստաբանն ի վնաս վստահորդի դատական ակտ կայացված լինելու դեպքում՝ մինչև այդ ակտի բողոքարկման ժամկետի լրանալը պարտավոր է վստահորդի հետ քննարկել դատական ակտը չբողոքարկելու հարցը և այդ կապակցությամբ համաձայնություն չստանալու դեպքում սահմանված կարգով բողոքարկել տվյալ ակտը:

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանող Շուշանիկ Շահինյանի վարքագիծը գնահատելու համար անհրաժեշտ է ստանալ հետևյալ իրավական հարցադրումների պատասխանները.

- *արդյո՞ք փաստաբան Շուշանիկ Շահինյանը բարեխիղճ իրավական օգնություն է ցուցաբերել Արտակ Ստեփանյանին,*
- *արդյո՞ք փաստաբան Շուշանիկ Շահինյանը՝ որպես հանրային պաշտպան, կատարել է Պալատի խորհրդի որոշմամբ հաստատված Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով սահմանված պահանջը:*

Պատասխանելով վերը նշված առաջին հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Շուշանիկ Շահինյանը ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը թիվ ԳԴ1/0015/01/20 քրեական գործով, որի շրջանակներում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 20.01.2023թ. որոշմամբ՝ Դիմողը մեղավոր է ճանաչվել և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 1 տարի 6 ամիս (մեկ տարի վեց ամիս) ժամկետով:

Այս համատեքստում Հանձնաժողովը, հարկ է համարում նշել, որ Փաստաբանն ունեցել է իր վստահորդի դեմ կայացված դատական ակտի բողոքարկման պոզիտիվ պարտականություն, որը վերջինիս կողմից չի կատարվել, թեև դրա վերաբերյալ Փաստաբանը չի ունեցել վստահորդի համաձայնությունը:

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը, բաց թողնելով բողոքարկման ժամկետները և չներկայացնելով բողոք ՀՀ վճռաբեկ դատարան, Դիմողին չի ցուցաբերել բարեխիղճ իրավական օգնություն, ինչն ընդունել է նաև Փաստաբանը:

Պատասխանելով երկրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ ԳԴ1/0015/01/20 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը Պալատի հանրային պաշտպանի գրասենյակում ստացվել է 26.05.2023թ. և սահմանված մեկամսյա ժամկետում Փաստաբանի կողմից չի բողոքարկվել:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի 33-րդ կետի 5-րդ ենթակետի տառացի վերլուծությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ բացակայում է դատական ակտը չբողոքարկելու վերաբերյալ վստահորդի համաձայնությունը, հանրային պաշտպանը **պարտավոր է** այն բողոքարկել:

Տվյալ դեպքում, փաստաբան Շուշանիկ Շահինյանն իր վստահորդ՝ Արտակ Ստեփանյանի կողմից չի ստացել համաձայնություն դատական ակտը չբողոքարկելու վերաբերյալ, ինչից հետևում է, որ որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում պարտավոր էր այն բողոքարկել Վճռաբեկ դատարանում:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Փաստաբան Շուշանիկ Շահինյանը ներկայացրած բացատրություններով, ինչպես նաև կարգապահական նիստի ընթացքում ընդունել է այն հանգամանքը, որ սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով իր կողմից բաց են թողնվել Դիմողի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկելու ժամկետները:

Այս պայմաններում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Փաստաբանը, ունենալով վճռաբեկ բողոք ներկայացնելու պարտավորություն, չի կատարել այն, ինչի արդյունքում խախտել է իր վստահորդի բողոքարկման իրավունքը, ինչն իր հերթին հանգեցրել է փաստաբանի նկատմամբ սահմանված վարքագծի կանոնների խախտմանը:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը, ինչպես նաև գործում առկա ապացույցներն իրենց համակցությամբ գնահատելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանի կողմից խախտվել են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, և 2.9.2 ենթակետերի պահանջները:

<u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի*

կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում, որ Փաստաբանը գիտակցել է իր կողմից կատարած խախտման բացասական հետևանքները և ընդունել է մեղքը: Փաստաբանը թույլ տված խախտմամբ առաջացած հետևանքները ուղղելու համար՝ կազմել է միջնորդություն՝ ազատազրկման ձևով պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ: Բացի դա, Վճռաբեկ դատարանը բավարարել է Փաստաբանի մեղքով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին Դիմողի միջնորդությունը, ինչով Դիմողի բողոքարկման իրավունքի խախտումը փաստացի վերացվել է, թեև Փաստաբանի արարքի վտանգավորությունն ու ոչ իրավաչափ բնույթը դրանով չեն վերացել:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, ինչից ելնելով՝ գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 39.7-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Շուշանիկ Խաչատուրի Շահինյանի (արտոնագիր՝ թիվ 2627) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն՝ «Փաստաբանության

մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, և 2.9.2 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23030-2-Ա
23 նոյեմբերի 2023թ.
ք.Երևան